Հավելված N 1
ՀՀ կառավարության 2026 թվականի
փետրվարի 5-ի N 115 - Ն որոշման

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ԴԱՍԱԿԱՐԳՉԻ 7214 ԵՎ 7215 ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ ԴԱՍԱԿԱՐԳՎՈՂ ՊՈՂՊԱՏԵ ԱՄՐԱՆՆԵՐԻ «ԲԱՑԹՈՂՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ», «ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ» ԵՎ «ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 7214 և 7215 ապրանքային դիրքերում դասակարգվող պողպատե ամրանների «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման լիցենզավորման ընթացակարգով կարգավորվում են սույն կետում նշված ապրանքների ներմուծման լիցենզավորման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն ընթացակարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) հիմնական լիցենզիա՝ լիցենզիա, որն արտաքին առևտրային գործունեության մասնակցին իրավունք է տալիս ներմուծելու լիցենզիայով նախատեսված քանակով լիցենզավորման ենթակա ապրանք.

2) ապրանք՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 7214 և 7215 ապրանքային դիրքերում դասակարգվող պողպատե ամրաններ.

3) հայտատու՝ արտաքին տնտեսական գործունեության մասնակից, որը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն (այսուհետ՝ լիազոր մարմին) է ներկայացնում փաստաթղթեր՝ հիմնական լիցենզիա ստանալու նպատակով:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

3. Հիմնական լիցենզիա ստանալու համար հայտատուն լիազոր մարմին է ներկայացնում՝

1) դիմում՝ նշելով իրավաբանական անձի գտնվելու վայրը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ բնակության և հաշվառման հասցեն), պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը.

2) հայտ՝ համաձայն N 1 ձևի.

3) պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20 նիշանոց ծածկագրի վերաբերյալ տեղեկատվություն:

4. Հիմնական լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներկայացվել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային հասցեն՝ secretariat@mineconomy.am), ինչպես նաև փոստով կամ առձեռն: Էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում դիմումը և հայտն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

5. Հայտատուի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելու դեպքում հիմնական լիցենզիան լիազոր մարմնի կողմից տրամադրվում է հայտի մուտքագրման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Հայտի և կից փաստաթղթերի թերի լինելու կամ դրանցում անհամապատասխանություններ առկա լինելու դեպքում լիազոր մարմինը հայտն ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով տեղեկացնում է հայտատուին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում լրացնել փաստաթղթերը կամ շտկել դրանցում առկա անհամապատասխանությունները: Տվյալ դեպքում հիմնական լիցենզիայի տրամադրման ժամկետը երկարաձգվում է մինչև 3 աշխատանքային օրով:

7. Հիմնական լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է, եթե սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված ժամկետում հայտատուն թերությունները շտկված հայտը կամ փաստաթղթերը չի ներկայացրել լիազոր մարմին կամ կրկին ներկայացրել է թերի:

8. Հայտի և հիմնական լիցենզիայի 5-րդ և 6-րդ կետերում անհրաժեշտության դեպքում կարող են նշվել մեկից ավելի երկրներ:

9. Հիմնական լիցենզիայի գործողության ժամկետի ավարտ է համարվում սույն որոշման 5-րդ կետով սահմանված ժամկետի ավարտը:

10. Այն դեպքում, երբ որպես իրավաբանական անձ գրանցված լիցենզավորված անձի հիմնադիր փաստաթղթերում կատարվել են փոփոխություններ կամ փոխվել են անհատ ձեռնարկատեր հանդիսացող՝ լիցենզավորված ֆիզիկական անձի անձնագրային տվյալները, տրամադրված հիմնական լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, և հայտատուն ներկայացնում է նոր հիմնական լիցենզիա ձևակերպելու դիմում՝ կցելով հայտը և նշված փոփոխությունները հավաստող փաստաթղթերը:

11. Հիմնական լիցենզիայի կորստի դեպքում լիազոր մարմինը, հայտատուի գրավոր դիմումի հիման վրա, տրամադրում է հիմնական լիցենզիայի կրկնօրինակը, որը պարունակում է «Կրկնօրինակ» գրառումը: Դիմումը, որով պարզաբանվում են հիմնական լիցենզիայի կորստի պատճառները և հանգամանքները, շարադրվում է ազատ ձևով:

12. Հիմանական լիցենզիայի կրկնօրինակը տրամադրվում է դիմումը լիազոր մարմնում մուտքագրելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Կրկնօրինակի տրամադրման համար պետական տուրք չի գանձվում:

Ձև N 1

Հ Ա Յ Տ

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ԴԱՍԱԿԱՐԳՉԻ 7214 ԵՎ 7215 ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ ԴԱՍԱԿԱՐԳՎՈՂ ՊՈՂՊԱՏԵ ԱՄՐԱՆՆԵՐԻ «ԲԱՑԹՈՂՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ», «ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ» ԵՎ «ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայտ N I	2. Գործողության ժամկետը I «__» _____ 20__ թ.
3. Հիմնական լիցենզիայի տեսակը I ՆԵՐՄՈՒԾՈՒՄ I	4. Հայտատու I
5. ՀՎՀՀ I	6. Վաճառողի երկիրը I
7. Ծագման երկիրը I	8. Չափի միավորը՝ տոննա I
9. Ծավալը I	10. Արժեքը I
10. Ապրանքի ծածկագիրը և նկարագրությունը ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ I	
12. Լրացուցիչ տեղեկատվություն (ըստ անհրաժեշտության) I	
13. Հիմնական լիցենզիան տալու հիմքը	14. Հայտատուի լիազորված անձ Անունը, հայրանունը, ազգանունը, պաշտոնը Հեռախոսահամարը Ստորագրությունը «__» _____ 20__ թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

05.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ